



---

**«ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ և  
ԱՐԴՅՈՒՆԱՎԷՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ»  
(PURE-Water) ԾՐԱԳԻՐ**

---

**ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ, ԹԱՓԱՆՑԻԿ,  
ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ  
ՄԱՐՏ, 2018



Համագործակցության պայմանագիր՝ AID-111-A-17-00005

**Ծրագրի անվանումը՝** «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում»

**Ֆինանսավորող՝** ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)

**Ծրագրի իրականացնող՝** «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի և «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ:



«Սույն ռազմավարությունը մշակվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Զրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները կամ կյուբի բովանդակությունը միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները»:



---

---

## Հապավումների ցանկ

---

---

ՁԼՄ – գանգվածային լրատվության միջոց

ՋՌԿԳ – Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՋԹ – ջրօգտագործման թույլտվություն

ՋՀՇՊՑ – ջրային ոլորտի հանրային շահերի պաշտպանության ցանց

ՋՕԸ- ջրօգտագործողների ընկերություն

ՏԻՄ – տեղական ինքնակառավարման մարմին



Սույն ռազմավարությունը մշակվել է «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ջրային ռեսուրսների մասնակցային կառավարման և օգտագործման իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կատարելագործմանն օժանդակելու նպատակով: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ 2017թվականին մեկնարկած եռամյա Ծրագիրն իրականացվում է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից, Երևանի պետական համալսարանի «Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի» և «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու արդյունավետ օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով, ինչպես նաև խթանել վարքագծի փոփոխությունները՝ ստորերկրյա ջրերի արդյունահանման կրճատումն ապահովելու համար: Սույն փաստաթղթի շրջանակներում համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկները միտված են նշված նպատակների իրականացմանը իրազեկվածության մակարդակի բարձրացման, մասնակցային գործընթացների կատարելագործման և որոշումների ընդունման գործընթացին քաղաքացիական հասարակության ներգրավման ճանապարհով: Ծրագիրը կարևորում է սահմանված նպատակների իրագործման ուղղությամբ ՀՀ Կառավարության և մասնավորապես ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվող աշխատանքները (վերջին 2 տարիների ընթացքում մշակվել և ՀՀ ազգային ժողով են ներկայացվել ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք օրենքների նախագծեր, մշակվել և ՀՀ Կառավարություն են ներկայացվել ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի շուրջ երեք տասնյակ ՀՀ Կառավարության որոշման նախագծեր, ընդունվել են մի շարք գերատեսչական ակտեր): Այդուհանդերձ, ջրային ռեսուրսների մասնակցային, թափանցիկ և հաշվետու կառավարման ոլորտում բաց են մնում մի շարք առանցքային հարցեր, որոնց կարգավորմանն է ուղղված սույն Ռազմավարությունը:

Հաշվի առնելով ջրային ռեսուրսների կառավարման և օգտագործման հարաբերությունների բազմաշերտ բնույթը՝ դրանց իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված առաջարկները վերաբերում են ինչպես ոլորտի օրենքներին, այնպես էլ դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերին: Իսկ իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկներ վերաբերում են ջրային ռեսուրսների կառավարման մարմինների հզորությունների զարգացմանը և ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

1991 թվականին «Բնության պահպանության օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ Գերագույն խորհրդի որոշման ընդունմամբ հիմք դրվեց շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման, այդ թվում՝ ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման հարաբերությունների կարգավորման համար: Նորանկախ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության համակարգը ձևավորող տարբեր իրավական ակտերում ներդրվել են ջրային ռեսուրսների մասնակցային կառավարման տարբեր կառուցակարգեր, որոնց արդյունավետությունը ներկայում բավարար չէ: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել գործող մի շարք իրավական



ակտերում կատարել լրացումներ և փոփոխություններ, որոնց արդյունքում կգործեն ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման հարաբերություններում հանրային մասնակցության ավելի արդյունավետ կառուցակարգեր՝ բարձրացնելով ոլորտի կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Միաժամանակ, հանրային մասնակցության կառուցակարգերից բացի, անհրաժեշտ է նաև բարելավել հարակից ինստիտուտների իրավակարգավորումները, իսկ որոշ դեպքերում ընդունել նոր իրավական ակտեր: Այս նպատակի իրագործման համար սույն փաստաթղթում ներառված են ինչպես ջրային ռեսուրսների մասնակցային կառավարման իրավահարաբերությունների, այնպես էլ հարակից ինստիտուտների կատարելագործմանն ուղղված առաջարկներ՝ հաշվի առնելով նաև ՀՀ վավերացրած միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

Սույն փաստաթուղթը հիմնվում է Ծրագրի շրջանակներում ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կողմից կատարված իրավական վերլուծության արդյունքների վրա, որի համար հիմք են ծառայել տարբեր ազգային և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքները, հաշվետվությունները և փորձագիտական գնահատականները, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները:

Սույն փաստաթուղթը համաձայնեցվել է Ծրագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբի հետ, որի անդամները ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման, առողջապահության նախարարությունների, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ջրային տնտեսության պետական կոմիտեի», ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչներն են, ինչպես նաև ջրային ոլորտի բարեփոխումների գործընթացներով շահագրգիռ դոնոր, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Փաստաթղթի մշակման աշխատանքներին մասնակցել են նաև ոլորտի պետական կառավարման այլ կառույցների, տարածքային կառավարման մարմինների, «Ջրօգտագործողների ընկերությունների», մասնավոր հատվածի, ՏԻՄ-երի, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև փորձագետներ և ակտիվ քաղաքացիներ, որոնց հետ անցկացվել են առանձին հանդիպումներ և քննարկումներ:



Ինչպես ցանկացած նորանկախ պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար անկախության ձեռքբերումը կանխորոշում էր իրավունքի գերակայության և մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացում, որի կարևորագույն բաղադրիչներից է հանդիսանում առողջ և բարենպաստ շրջակա միջավայրը: Անհատ-հասարակություն-պետություն փոխհարաբերություններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն 1991թ-ից ի վեր մշտապես ուշադրության կենտրոնում է պահել ու պահում շրջակա միջավայրի և դրա առանձին բաղադրիչների օգտագործման, պահպանության և բարելավման հիմնահարցերը՝ ելնելով նաև իր ստանձնած միջազգային պարտավորություններից: Շրջակա միջավայրի պահպանությունն ընդունելով որպես առաջնահերթություն, Հայաստանի Հանրապետությունում ընդունված 1995թ-ի Սահմանադրությունը, իսկ այդուհանդերձ նաև 2005 և 2015 թվականների սահմանադրական փոփոխությունները, նախատեսել են համապատասխան դրույթներ շրջակա միջավայրի պահպանության, արդյունավետ բնօգտագործման և մարդու էկոլոգիական իրավունքների մասին: Հատկապես ելնելով ջրային ռեսուրսների առանձնահատկություններից, անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ ՀՀ Սահմանադրության 2015թ-ի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում ջրային ռեսուրսները հռչակվեցին որպես պետության բացառիկ սեփականություն: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ ջրային ռեսուրսների պահպանության և ջրօգտագործման հարաբերությունները գտնվում են պետության ուշադրության կենտրոնում, ինչը կապված է նաև ջրային ռեսուրսների՝ որպես մարդու և հասարակության կենսագործունեության առաջնահերթ պայմանի, տնտեսության կայացման կարևորագույն հիմքի ու նախապայմանի, ինչպես նաև որպես սպառվող ռեսուրսի հետ:

Ու թեև ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ընդերքն ու ջրային ռեսուրսները հռչակված են որպես պետության բացառիկ սեփականություն, սակայն, պետք է հաշվի առնել, որ դրանք հնարավոր չէ դիտարկել շրջակա բնական միջավայրի մյուս տարրերից անկախ: Պետք է մշտապես առաջնորդվել այն մոտեցմամբ, որ յուրաքանչյուր իրավակարգավորում, կամ ցանկացած գործողություն, կապված ջրային ռեսուրսների հետ, ուղղակիորեն կապված է ու մեծ ազդեցություն ունի շրջակա բնական միջավայրի մյուս բաղադրիչների հետ:

ՀՀ Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պահպանության և ջրօգտագործման հարաբերությունները լի են առանցքային խնդիրներով, որոնք պահանջում են համակարգային և արդյունավետ լուծումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խնդիրների բազմաբնույթ ու բազմաթիվ լինելու պարագայում մեկ ուղղությամբ աշխատանքների պլանավորումն ու իրականացումը կարող է իմաստագուրկ ու խիստ նվազ արդյունավետ լինել: Ուստի յուրաքանչյուր անգամ պետք է հիշել, որ սլոյալ խնդիրն ուղղակիորեն կապված է և բխում է մեկ այլ խնդրից, որը պահանջում է փոխկապակցված ուղղություններով համալիր լուծումներ:

Ու թեև դեռևս 2002 թվականին ընդունված ՀՀ Ջրային օրենսգիրքը և դրա հիման վրա ընդունված մի շարք օրենքներ հիմնարար կերպով ճանաչում են հասարակության իրազեկվածության, մասնակցության կարևորությունը ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, նախատեսում են անհատների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը ջրային ռեսուրսների պահպանության գործում, այնուամենայնիվ,



մինչև օրս բազմաթիվ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված, իսկ դրանցից որոշներն էլ ունեն առավել խորքային վերլուծության ու բացերն ու թերությունները լրացնելու կարիք:

Տվյալ իրավիճակում Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարման և օգտագործման համար խիստ կարևոր նշանակություն ունի հանրային մասնակցության գործոնը, ինչը լավագույնս կարելի է ապահովել հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման, վարքագծի որոշակի փոփոխությունների խթանման միջոցով: Վերոհիշյալը, թեև հանդիսանում է կարևոր երաշխիք ու նախապայման Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրների լուծման համար, սակայն, թե՛ կառավարման բնագավառի, թե՛ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման ու վարքագծի փոփոխության բազմաշերտ քայլերը ենթադրում են մի շարք խնդիրների լուծում:

**1. Յուրաքանչյուր ոլորտի իրավակարգավորման կարևորագույն հիմքը տվյալ ոլորտի առանցքային իրավական ակտերի առկայությունն է և հասկացությունների հստակ, լիարժեք ու ամբողջական սահմանումը:** Ներկայում ՀՀ ջրային օրենսդրության համակարգում բացակայում են այնպիսի առանցքային իրավական ակտեր, ինչպիսիք են «Խմելու ջրի մասին» ՀՀ օրենքը, «Ռոտզման ջրի մասին» ՀՀ օրենքը, «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, ռոտզման ջրի որակի նվազագույն ստանդարտները կարգավորող իրավական ակտերը: Միաժամանակ, ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման բնագավառի հասկացությունները, չնայած գործող ծավալուն օրենսդրությանը, շարունակում են առանձին դեպքերում մնալ թերի ու բացթողումներով, իսկ որոշ դեպքերում էլ ընդհանրապես գոյություն չունեն: Նման իրավիճակում հաճախակի են օրենսդրության տարընթերցումները և իրավանորմերի ոչ միատեսակ մեկնաբանությունը: ՀՀ Ջրային օրենսգրքում և հարակից իրավական ակտերում բացակայող մի շարք կարևորագույն եզրույթների սահմանումները երաշխիք են տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար, ինչը լուրջ նախապայման է հստակ քաղաքականության ու գործելակերպի համար:

**2. Հաջորդ կարևոր խումբ հարաբերությունները, որտեղ լուրջ բացեր ու թերություններ կան, ջրային տեղեկատվական համակարգերի ու տեղեկատվության մատչելիության հարաբերություններն են:** Մասնավորապես, տարբեր մարմինների կողմից տարբեր պարամետրերով իրականացվող մոնիթորինգը մեծածավալ և հաճախ ոչ համադրելի տվյալներ է պարունակում, որոնց համադրումն ու միասնական մոտեցումներով վերլուծությունը բավականին խնդրահարույց է: Ուստի, ներկայիս իրավիճակում ՀՀ ջրային օրենսգրքի 19.1 հոդվածով նախատեսված հանրության համար հասանելի գնահատում իրականացնելը որպես մոնիթորինգի նպատակ, դեռևս իրագործված չէ: Այս նկատառումը կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության՝ Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացման տեսանկյունից: Դրա հիմնական պատճառն այն է, որ շարքային քաղաքացու համար շարունակում է շատ բարդ ու ժամանակատար մնալ խմելու, ռոտզման ջրի, մակերևութային և ստորերկրյա ջրերի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն ստանալը:

Ջրային ռեսուրսների պետական կադաստրը ևս լուրջ բարեփոխումների կարիք ունի՝ դրանում գրանցված տեղեկատվության մատչելիության ապահովման հետ կապված: Մասնավորապես, ջրային ռեսուրսների պետական կադաստրում գրանցվող ջրօգտագործման իրավունք հավաստող փաստաթղթերը և դրանց պայմանները այսօր հասանելի են խիստ





մասնակիորեն, ինչը լրջորեն խոչընդոտում է հանրային մոնիթորինգի իրականացմանը քննարկվող ոլորտում:

Տեղեկատվության մատչելիությանը վերաբերող կարևոր խնդիր է շարունակում մնալ ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը համայնքներում, ինչը հասկապես ընդգծվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռախոսային հավելվածների օգտագործման հմտությունների ցածր մակարդակի ֆոնին:

**3. Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, այդ գործընթացի թափանցիկության, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվության մի շարք պայմանների ձևակերպումները ևս շարունակում են մնալ խնդրահարույց:** Մասնավորապես, թեև ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածը, ի թիվս ջրային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի, նախատեսում է նաև ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի հրապարակայնություն, սակայն, այդուհանդերձ, ձևավորված չէ դրա իրավակարգավորման արդյունավետ քայլերի շրջանակ, որը կապահովի շահագրգիռ հասարակության համար ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի և արդեն իսկ տրամադրված թույլտվությունների իրական հրապարակայնությունը:

Վիճահարույց է նաև ջրօգտագործման թույլտվությունը բողոքարկելու ժամկետը, որը ըստ համապատասխան իրավակարգավորման, կարող է իրագործվել միայն այդ թույլտվությունը տրամադրելու պահից մեկ տարվա ընթացքում: Մինչդեռ լիովին հնարավոր է, որ տվյալ ջրօգտագործման թույլտվության հիման վրա իրագործվող գործունեության հետևանքով բացասական ազդեցությունն ի հայտ գա ավելի ուշ, երբ լրացել է այդ մեկ տարին: Այս պարագայում, փաստորեն, գործնականում վարչական ակտի բողոքարկման հնարավորություն ներկայում չկա:

Ջրօգտագործման թույլտվությունների հետ կապված հաջորդ բացը կայանում է նրանում, որ թեև ՀՀ Կառավարության 2003 թվականի 218-Ն որոշման Հավելված 3-ի 4-րդ կետը նախատեսում է ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար նաև էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացնելու հնարավորություն, համապատասխան էլեկտրոնային գործիքը դեռևս ստեղծված չէ:

Միաժամանակ, վերանայման կարիք ունեն ջրօգտագործման թույլտվության մեջ ամրագրվող մի շարք պայմաններ՝ հաշվի առնելով թույլտվությունը անհարկի կարգավորումներով չձանրաբեռնելու, ինչպես նաև մի շարք պայմանների բովանդակությունը և իրագործման չափանիշները հստակեցնելու անհրաժեշտությունը:

Առանձնակի ուշադրության են արժանի նաև **ազատ և հատուկ ջրօգտագործման ինստիտուտի իրագործման դժվարությունները:** Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում այն գործիքները, որոնք հնարավորություն կտան վեր հանելու ազատ ջրօգտագործման այն դեպքերը, որոնք խախտում կամ սպառնում են խախտել ջրերի ստանդարտները, քանակական լուրջ փոփոխությունները կամ այլ անձանց իրավունքների խախտումները:

**4. Ջրային ռեսուրսների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության հարաբերությունների իրավակարգավորման կատարելագործումը** ջրային



ռեսուրսների մասնակցային կառավարման հիմնասյուներից է: Այսօր, թեև ոլորտի հիմնական իրավական ակտերը նախատեսում են հանրային մասնակցության հնարավորություն ջրային ոլորտի գրեթե բոլոր փաստաթղթերի ընդունման գործընթացին, այդուհանդերձ, ձևավորված չեն արդյունավետ կառուցակարգեր մասնակցության գործընթացն իրապես արդյունավետ դարձնելու համար: Մասնավորապես, առկա են բազմաթիվ տեխնիկական և իրավական բնույթի խոչընդոտներ, որոնք թույլ չեն տալիս շահագրգիռ հանրությանը ժամանակին տեղեկություններ ստանալ համապատասխան գործընթացների վերաբերյալ, ծանոթանալ քննարկման դրված փաստաթղթերին և ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկները: Հաճախ ապահովված չեն նաև հետադարձ կապի հնարավորություններ: Այս համատեքստում չլուծված խնդիր է շարունակում մնալ նաև ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացին ՏԻՄ-ի ներգրավվածության հարցը՝ որպես համայնքի շահերը ներկայացնող կառույցի: Պատշաճ գնահատված չէ նաև ՏԻՄ-ի հնարավորությունը ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը համայնքի բնակիչներին տրամադրելու և մասնակցային գործընթացները կազմակերպելու տեսանկյունից:

Չնայած այն հանգամանքին, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որպես սկզբունք, նախատեսում է համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, սակայն այս կառուցակարգը ամենևին կայացած չէ ջրային ոլորտի հարցերով:

Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում մասնակցության բոլոր բաղադրիչների համար միակ իրավասու սուբյեկտը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն է: Ջրօգտագործման թույլտվությունների դեպքում ծանուցումը միայն այդ մարմնի կողմից իրականացնելը բավականաչափ արդյունավետ չէ, քանի որ գործնականում տվյալ համայնքի կամ համայնքների բնակիչները, որտեղ պետք է իրականացվի ջրօգտագործումը, հաճախ չեն իրազեկվում քննարկվող ջրօգտագործման թույլտվության նախագծի մասին: Այն տեղադրվում է կամ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ինտերնետային կայքում կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող պարբերականում, ինչը բավարար չէ տեղեկացվածության պատշաճ ապահովման համար:

Բացի այդ, ջրօգտագործման թույլտվության տրամադրման հայտի վերաբերյալ ծանուցման մեջ նշվում է, որ բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին և փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ կոնկրետ նշված ժամին (ժամը 17:00-ից 18:00-ն), դիմել ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին: Այս կարգավորումը խիստ սահմանափակ հնարավորություն է ընձեռում շահագրգիռ հանրությանը ծանոթանալու համապատասխան նախագծերին, ձևավորելու կարծիք և բարձրաձայնելու այն:

Քննարկվող ոլորտի կարևորագույն բացերից է այն, որ գործող իրավակարգավորման պայմաններում հանրապետական գործադիր մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկումներն առավելապես անցկացվում են Երևան քաղաքում, նույնիսկ այն դեպքում, երբ կարգավորվող հարաբերությունները սերտորեն առնչվում են առանձին



տարածաշրջանների կամ համայնքների բնակչությանը, օրինակ, ստորերկրյա ջրերի պահպանությանը և օգտագործմանը վերաբերող իրավական ակտերի նախագծերին:

5. Հաջորդ խումբ խնդրահարույց հարաբերությունները կենտրոնանում են **ջրօգտագործողների ընկերությունների փաստացի ոչ մասնակցային, ոչ արդյունավետ գործունեության և ջրօգտագործողների՝ որպես ոռոգման ջրի բաշխման/մատակարարման գործում կարևորագույն դերակատարների, ցածր իրավագիտակցության և ոչ պատշաճ մակարդակի տեղեկացվածության** վրա: Թեև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված, ջրային ռեսուրսների թափանցիկ և մասնակցային կառավարումը ներկայացված է որպես ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի այնպիսի կառավարում, որոնց վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը բաց է և տեսանելի հասարակության բոլոր խավերի համար և նրանց մասնակցությունն այդ գործընթացին իրավական առումով հասանելի է, սակայն ՀՀ-ում այդ պատկերն հեռու է իրական լինելուց, որի համար կան մի շարք հիմնավոր և ոչ հիմնավոր պատճառներ: Մի շարք միջազգային իրավական ակտերով սահմանվել են ջրային ռեսուրսների կառավարման հիմնական սկզբունքները, որոնցից առանձնակի կարևորվում է մասնակցային գործընթացների բոլոր մակարդակներում ջրօգտագործողների, ջրային ռեսուրսների կառավարիչների և որոշում կայացնողների ընդգրկումը և կանանց դերը ջրի մատակարարման, կառավարման և պահպանության ոլորտում:

Մասնավորապես, սկզբնապես ստեղծվելով որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն, առաջնորդվելով հանրային շահերով, ջրօգտագործողների ընկերությունները պետք է ոռոգման ջուր մատակարարեին ջրօգտագործողներին, իրականացնեին ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումը, իրենց անդամ ջրօգտագործողների իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Սակայն, ներկայում ջրօգտագործողների ընկերության՝ օրենքով նախատեսված բնորոշման բոլոր կոմպոնենտները (բաղադրիչները) անհրատեսական է համատեղել մեկ կառույցի մեջ, ինչի պատճառով էլ մի կողմից դժգոհ են ջրօգտագործողները, մյուս կողմից էլ նույնիսկ 100% վճարների գանձումն ապահովելու պարագայում ջրօգտագործողների ընկերությունները չեն կարողանում իրական ներդրումային քաղաքականություն իրականացնել: Ավելին, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից (պետությունից) սուբսիդավորում ստանալու արդյունքում ջրօգտագործողների ընկերությունները որոշակի կախման մեջ են հայտնվել համապատասխան մարմնից, ինչը ևս բացասական հետևանքներ է առաջացրել իրենց գործունեության ֆինանսական անկախության տեսանկյունից: ԶՕԸ-երը փաստացի շահագրգռված չեն դառնալու ինքնաձախսաձածկվող կամ լրացուցիչ վճարովի ծառայություններ մատուցող կառույցներ, որը վերջիններիս հնարավորություն կտար ձեռք բերել իրական անկախություն և ապահովել ոռոգման համակարգի պատշաճ կառավարում:

Փաստացի պատկերն ստացվում է այնպես, որ ԶՕԸ-երը, հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն, ունենալով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ, իրենց գործունեության էությամբ առավելապես նման են մասնավոր առևտրային կազմակերպությունների, իսկ գործելաոճով ավելի շատ հիշեցնում են պետական առևտրային կազմակերպությունների: Ինչ վերաբերում է իրենց անդամների իրավունքների ու շահերի պաշտպանությանը պետք է նշել, որ չպահպանելով



ներկայացուցչականության, մասնակցային կառավարման սկզբունքները, ՋՕԸ-երը հեռացել են ջրօգտագործողներից՝ բոլորովին անտեսելով հրապարակային, հաշվետու ու թափանցիկ գործելու կանոնը: Չնայած նման ներկայացուցչական կազմակերպական կառուցվածք ունենալու պարագային, ցավոք, բնակչության, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների իրական ներկայացվածությունն ապահովված չէ, հստակ չեն համայնքներից ներկայացուցիչների ընտրության ընթացակարգերը, չկան օրենքով սահմանված կարգով չափանիշներ, որոնց հիման վրա կարելի է իրականացնել գնահատում կամ վերահսկողություն: Իրավաբանորեն սահմանված չեն այն պետական կառույցները, որոնք պատասխանատու են **ռոռզման ջրի մատակարարման ծառայության** մոնիթորինգի, գնահատման կամ վերահսկողության համար: ՋՕԸ-երի կազմում գործող վերստուգիչ մարմինները չեն գործել և ներկայում էլ չեն գործում:

Ուշագրավ է նաև ռոռզման ջրի համապատասխան պայմանագրերի բովանդակային ու կազմակերպական խնդիրների ուսումնասիրության արդյունքում բացահայտված բացերն ու թերությունները: Մասնավորապես, ըստ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության սպասարկման տարածքում ռոռզելի հող ունեցող ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողները ռոռզման ջուր ստանալու համար ընկերության հետ կնքում են ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր՝ ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով: Եվ միայն ռոռզման ջուր այլ աղբյուրից ձեռք բերելու ապացույցներ ներկայացնելու դեպքում ընկերության վարչական խորհուրդը կարող է ջրօգտագործողի հետ ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր չկնքել: Փաստորեն, թեև ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր կնքելը երկկողմ պարտականություն է, սակայն, պրակտիկայում լուրջ խնդիր է պայմանագրային դրույթները լիարժեք պատկերացնելն ու ընկալելը: Այն հանգամանքը, որ բազմաթիվ ջրօգտագործողներ իրենց կողմից ստորագրած պայմանագրի՝ իրենց օրինակը նույնիսկ չեն վերցնում, արդեն իսկ նշանակում է, որ ջրօգտագործողները չեն պատկերացնում դրանցում նախատեսված դրույթների կարևորությունը, դրանցում նախատեսված իրենց իրավունքների շրջանակն ու դրանց պաշտպանության եղանակները: Չենց դրանից էլ բխում է հետագայում խնդրահարույց հարցերով համապատասխան մարմիններին չդիմելու, համապատասխան ապացույցներ ներկայացնելու անհնարինության փաստը: Այս ամենը հանդիսանում է տեղեկացվածության ցածր մակարդակի արդյունք:

Ինչ վերաբերում է պայմանագրի կոնկրետ բովանդակությանը, ապա ակնհայտ է, որ սկսած մատակարարվող ռոռզման ջրի որակից, ռոռզման ջուր ստանալու հայտը ներկայացնելու անորոշ ձևից, փաստացի (ինչը հստակ որոշելն այս իրավիճակում անիրատեսական է) ստացած ջրի համար վճարելուց, ցերեկային՝ առավել բարձր գին ունեցող ռոռզումից, մինչև ռոռզման համար ստացված ջրի դիմաց 6 ամիս չվճարելու դեպքում հողամասի սեփականատիրոջ օգտագործման իրավունքն առավելագույնը երեք տարի ժամկետով դադարեցնելու պայմանը, լուրջ պատճառ են հանդիսանում ներկայիս անարդյունավետ գործունեության ու դժգոհությունների համար: Ստացվում է, որ ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջուր մատակարարելու մասին պայմանագիրն ամբողջությամբ չի արտահայտում սահմանված իրավական պահանջները և լիովին չի արտահայտում ջրօգտագործողների իրավունքների պաշտպանության նպատակը: Արդյունքում բազմաթիվ ջրօգտագործողներ ստիպված են լինում դիմել ծայրահեղ քայլերի, ինչպիսին իրենց հողամասերը ռոռզելուց հրաժարվելն է, որն էլ իր հերթին հանգեցնում է բացասական հետևանքների, օրինակ՝ հողի դեգրադացիայի:



6. **Ջրային ոլորտի վեճերի կարգավորման կառուցակարգերի կատարելագործումը** ոլորտի արդյունավետության երաշխիքներից է: Դրա հետ կապված բարդությունը հիմնականում բխում է ոլորտի բազմաշերտ ու խիստ ծանր հետևանքներ առաջացնող հարաբերություններով, ինչպես նաև էկոլոգիական ու տնտեսական շահերի բախմամբ: Բնականաբար, ջրօգտագործման բնագավառում ծագել ու ծագում են վեճեր, որոնք պարտադիր կարգով պետք է գտնեն լուծում: Այս բնագավառի վեճերի լուծման արտադատական եղանակներից ՀՀ ջրային օրենսգիրքն անդրադառնում է Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովին, ՀՀ Կառավարությանն առընթեր ստեղծված Կանոնակարգող խորհրդին և Ջրօգտագործողների ընկերություններում ստեղծվող Վեճեր լուծող հանձնաժողովներին: Մասնավորապես, Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովը լուծում է ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը, Կանոնակարգող խորհուրդը լուծում է ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության ընթացքում ծագած վեճերը, իսկ ՋՕԸ-երի կազմում ձևավորվող Վեճեր լուծող հանձնաժողովներն էլ կոչված են լուծելու ջրօգտագործողների և ջրօգտագործողների ընկերությունների միջև ծագող վեճերը: Ու թեև ՀՀ Ջրի ազգային խորհրդի Կանոնակարգն ու կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի՝ դեռևս 2002 թվականի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա նույն 2002թ. վարչապետն ընդունել է Վեճեր լուծող հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնակարգը և կազմը հաստատելու մասին որոշումը, սակայն, ցավոք, Ջրի ազգային խորհրդի գործունեության էլեկտրոնային կայքում տեղադրված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին նիստը գումարվել է 2012 թվականին, ինչը իրատեսական չէ, իսկ Վեճեր լուծող հանձնաժողովն ընդհանրապես որևէ նիստ չի գումարել, ինչը ակնհայտորեն վկայում է այն մասին, որ կա՛մ որևէ անգամ որևէ վեճ չի լուծվել այս մարմնի կողմից, կա՛մ այդ մարմինների գործունեության վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն չկա/հասնաելի չէ հանրությանը:

Ինչ վերաբերում է Կանոնակարգող խորհրդի գործունեությանը, ապա թեև ՀՀ Կառավարության 2002թվականի հոկտեմբերի 17-ին ընդունված 1678-Ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը Կանոնակարգող խորհուրդ, հաստատվել է դրա կազմը, սակայն, նախ և առաջ պետք է նշել, որ օրենքով և որոշմամբ նախատեսված գործունեության ուղղություններից և ոչ մեկը նպատակատուղով չէ վեճերի լուծմանը: Պետք է ենթադրել, որ այս լիազորությունը ներառված է «օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների» շրջանակում: Այս մարմնի գործունեության պրակտիկայի վերլուծությունն էլ իր հերթին վկայում է, որ որևէ անգամ որևէ վեճի լուծման ուղղությամբ գործունեություն չի ծավալվել: Եվ, վերջապես, ըստ ՀՀ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի ընկերությունների կազմակերպական կառուցվածքը նախատեսող 12-րդ հոդվածի համաձայն Ընկերության ժողովը ընտրում է առնվազն երեք անդամից կազմված վեճեր լուծող հանձնաժողով: Ու չնայած ստեղծված համապատասխան դրույթների **դե յուրե** գոյությանը, չնայած, որ օրենքն ու ՋՕԸ-ի կանոնադրությունը սահմանում են վեճերի լուծման բավականին արագ ընթացակարգ, վեճերի լուծման՝ բավականին թափանցիկ ու օբյեկտիվ արարողակարգ, սակայն, պրակտիկայի վերլուծությունը, վեճեր լուծող հանձնաժողովների նիստերի արձանագրությունների բացակայությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ **դե ֆակտո**, վեճեր չեն քննվում ու լուծում չեն ստանում այս մարմնի կողմից ևս:



Զրոգտագործման բնագավառի վեճերի լուծման դատական եղանակի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը հազեցած դրույթներ է պարունակում թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական, թե՛ կարգապահական ու թե՛ քրեական պատասխանատվության ոլորտներում, սակայն, պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս բնագավառում ևս կան բազմաթիվ բացեր, որոնք հանգեցնում են ոլորտի խնդիրների լուծման փոխարեն դրանց առավել խոշորացմանն ու աճին: Նախ և առաջ հասարակությունը բավականին պասիվ դիրք է զբաղեցնում այս բնագավառի վեճերի հարցերով դատարան դիմելու հարցերում, ինչի պատճառը մի կողմից իրավագիտակցության ցածր մակարդակն է, մյուս կողմից դատական համակարգի նկատմամբ վստահության մթնոլորտի բացակայությունն ու նաև ժամանակի ու դատական գործընթացների համար պահանջվող վճարների՝ շատերի համար բավականին բարձր լինելը: Արդյունքում դատարաններում հիմնականում քննվում են ջրօգտագործողների կողմից վճարումներ չկատարելու դեպքերը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հայցադիմումին ներկայացվող պարտադիր պահանջների լայն ցանկ, որոնց չպահպանումը հանգեցնում է հայցադիմումի հետ վերադարձին: Վերաքննիչ բողոքին ներկայացված են առավել խիստ պահանջներ՝ կապված գործի ելքի վրա ազդած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման մասին նշելուց, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու պահանջի հետ: ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու պահանջներն առավել բարդ են, ինչը դժվարացնում է վճռաբեկ դատարան բողոք բերելու հնարավորությունը: Մինչդեռ հաշվի առնելով մեր բնակչության և հատկապես ջրօգտագործողների բնագավառի միջին խավի իրավագիտակցության ցածր մակարդակն ու ֆինանսական հնարավորությունները, կարելի է լիարժեք պատկերացում կազմել, թե ինչու են այս բնագավառի վեճերով եզակի անձինք դիմում դատարան:

**Միաժամանակ, փորձագետները և ոլորտի մասնագետները համակարծիք են, որ առկա հիմնախնդիրների չլուծման հիմնական պատճառը քաղաքական կամքի բացակայությունն է:**



Աշխատանքային խմբի անդամների, ինչպես նաև շահառու տարբեր խմբերի հետ քննարկումների արդյունքում Ծրագիրն առանձնացրել է մեկ վերջնականատակ և վեց հիմնական նպատակներ, որոնց իրականացումն, ըստ Ծրագրի կողմից կատարված վերլուծությունների, կհանգեցնի ջրային ոլորտի մասնակցային, թափանցիկ և հաշվետու կառավարմանը և ջրօգտագործման արդյունավետության բարձրացմանը:

**ՎԵՐՋՆԱՆՊՍՏԱԿ-** «Արարատյան դաշտում ապահովել ջրային ռեսուրսների մասնակցային, թափանցիկ, հաշվետու կառավարում ի նպաստ ջրօգտագործման արդյունավետության բարձրացման»:

**ՆՊՍՏԱԿ 1:** Ընդունվել են ՀՀ ջրային օրենսդրության ոլորտի մի շարք առանցքային իրավական ակտեր և սահմանվել են և/կամ հստակեցվել են ՀՀ ջրային օրենսգրքում և հարակից իրավական ակտերում կիրառվող հասկացությունները

**1.1. Ընդունվել են ՀՀ ջրային օրենսդրության ոլորտի մի շարք առանցքային իրավական ակտեր:** Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումները սկսվել են 2001թվականից և ԱՄՆ ՄԶԳ շարունակական ջանքերի շնորհիվ իրականացվել են մի շարք առանցքային ծրագրեր, որոնց իրականացումը մեծապես նպաստել է ոլորտի պատշաճ իրավակարգավորմանը, ինչպես նաև ոլորտի զարգացման հայեցակարգերի և ռազմավարությունների ընդունմանը: 2002թվականին ընդունվեց նոր Ջրային օրենսգիրքը, որի կիրարկումն ապահովելու նպատակով 2002թվականից սկսած ՀՀ Կառավարության կողմից մշակվել և հաստատվել են ավելի քան 150 իրավական ու նորմատիվային փաստաթղթեր: Դրանով հանդերձ, ոլորտի իրավահարաբերությունների համալիր կարգավորման նպատակով անհրաժեշտ է հետևյալ իրավական ակտերի ընդունումը՝ «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի, «Խմելու ջրի մասին» ՀՀ օրենքի, «Ռոտզման ջրի մասին» ՀՀ օրենքի ընդունում նախապես մշակված հայեցակարգերի հիման վրա, ինչպես նաև ռոտզման ջրի որակի ստանդարտների սահմանում, ջրերի գործող ստանդարտների վերանայում և այլն:

**1.2. Սահմանվել են և/կամ հստակեցվել են ՀՀ ջրային օրենսգրքում և հարակից իրավական ակտերում մի շարք կարևոր հասկացություններ:** Գործող իրավական ակտերում ներառված չեն ջրային ոլորտին վերաբերող մի շարք առանցքային սահմանումներ, ինչպես օրինակ՝ «ջրօգտագործող», «ջուր սպառող», «ջրի հավասարաչափ մատչելիություն», «ազատ ջրօգտագործում», , «հոսքաջրեր», հանրային հսկողություն/մոնիթորինգ, բնապահպանական/էկոլոգիական թողք/հոսք և այլն:

**1.3. Դրանից բացի,** առանձին սահմանումներ կարիք ունեն վերանայման դրանց բովանդակությունը հստակեցնելու և ՀՀ ջրային օրենսդրության համակարգում դրանց միասնականացումն ապահովելու նպատակով: Վերոնշյալ հասկացությունների սահմանումներն անհրաժեշտ են ջրային ոլորտի օրենսդրության տարրնթերցումներից խուսափելու և գործող օրենսդրության արդյունավետ կիրարկումն ապահովելու համար:



*Մույն Ռազմավարության մշակման համար հիմք ծառայած իրավական վերլուծության Հավելված 11-ը բովանդակում է ավելի քան 20 հասկացությունների սահմանումների և փոփոխությունների առաջարկներ:*

**ՆՊՍՍԿ 2: Բարելավվել է ջրային ռեսուրսների պետական մոնիթորինգի և ջրային ռեսուրսների պետական կադաստրի համակարգը, կատարելագործվել են տեղեկատվության մատչելիության կառուցակարգերը**

**2.1. Բարելավվել է ջրային ռեսուրսների պետական մոնիթորինգի համակարգը:** Ջրային ռեսուրսների պետական մոնիթորինգի համակարգի բարելավումը Օրագիրը դիտարկում է «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N3 արձանագրային որոշմամբ որդեգրված մոտեցումների համատեքստում՝ հաշվի առնելով ջրային ռեսուրսների մոնիթորինգի և համապատասխան ծառայությունների (խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, ոռոգման ջրի մատակարարման) մոնիթորինգի առանձնացման անհրաժեշտությունը: Մոնիթորինգի համակարգի կատարելագործման մասով Օրագրի մոտեցումները համընկնում են բնապահպանական մոնիթորինգի պետական միասնական համակարգի ձևավորման վերաբերյալ ՀՀ Կառավարության որդեգրված մոտեցման հետ: Այս նպատակի իրականացումը թույլ կտա ապահովել ոչ միայն տարբեր պետական մարմինների կողմից տարբեր պարամետրերով իրականացվող մոնիթորինգային տվյալների համադրելիությունը, այլ նաև առավել կիեշտացնի այդ տվյալների մատչելիության ապահովումը հանրության համար: Ամբողջական, ճշգրիտ, մշակված տվյալների մատչելիության ապահովումը հանրության համար կարևորագույն նախապայման է նաև հանրային մոնիթորինգի ինստիտուտի կայացման համար՝ որպես ջրային ռեսուրսների թափանցիկ և հաշվետու կառավարման հիմնական բաղադրիչ:

Ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետությունում «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N3 արձանագրային որոշմամբ, Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի գործող օրենսդրական հենքի կատարելագործման խնդիրն արդիական է, քանի որ այն չի ապահովում էկոհամակարգային մոտեցման մոդելի կիրառմամբ միասնական մոնիթորինգի իրականացման ու տեղեկատվական համակարգերի կառավարման և բնության բոլոր բաղադրիչների միմյանց հետ շաղկապված վիճակի գնահատման գործընթացների կարգավորումը:

Կարևորում ենք խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների հանրային հսկողության մեխանիզմների ներդրումը, որի համար կարևոր է սահմանել միասնական մեթոդաբանություն, չափորոշիչներ և այլ պայմաններ, որոնք համադրելի և ընդունելի կլինեն պետական վերահսկողություն իրականացնող մարմինների/կառույցների կողմից: Ջրային ռեսուրսների որակի նկատմամբ հանրային մոնիթորինգի հասկացության սահմանումը, մեթոդաբանությունը, չափորոշիչների սահմանման անհրաժեշտությունը աշխատանքային խումբն արձանագրել է որպես երկարաժամկետ ռազմավարական խնդիր:

**2.2. Բարելավվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի համակարգը:** Ջրային ռեսուրսների պետական կադաստրի համակարգի բարելավումը հնարավորություն կտա առցանց





ռեժիմով մատչելի դարձնել ջրօգտագործման թույլտվությունների բովանդակությունը կազմող պայմանները, որոնք այսօր մատչելի են միայն մասամբ և բացառապես ՋՌԿ տարեկան հաշվետվությունների շրջանակներում: ՋՌԿ համակարգի բարելավումը կարևոր քայլ է ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նկատմամբ հանրային մոնիթորինգի ինստիտուտի կայացման ճանապարհին՝ որպես անհրաժեշտ տվյալների ապահովման կարևորագույն օղակ: Իհարկե, այս տվյալների թափանցիկությունը դիտարկվում է բացառապես առևտրային գաղտնիքի պահպանության պայմանով: Այս համատեքստում «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի փետրվարի 2-ի N68 որոշմամբ ամրագրված մոտեցումները հիմնականում համահունչ են Ծրագրի նպատակներին և գործողություններին:

**2.3. Կատարելագործվել են ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության կառուցակարգերը:** Նշված կառուցակարգերը դիտարկվում են երկու հարթություններում՝ 1) տեղեկատվության մատչելիության ոլորտի օրենսդրության կատարելագործում և առցանց տեղեկատվական շտեմարանների մատչելիության ապահովում, և 2) անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության ապահովում համայնքներում՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի դերակատարությունը և այն փաստը, որ մարդիկ հակված են անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար դիմել համայնքի ղեկավարին:

Առաջին ենթակետում սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է տեղեկատվության մատչելիության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ ամրագրել «Էկոլոգիական տեղեկատվության» բնորոշումը, ինչպես նաև սահմանել տեղեկատվության մատչելիության առանձնահատուկ ռեժիմ՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները:

Ջուգահեռաբար, անհրաժեշտ է համալրել և մատչելի դարձնել ջրային ռեսուրսների քանակական և որակական ցուցանիշների մասին տեղեկատվական առցանց շտեմարանները՝ ներդնելով համապատասխան որոնման ֆիլտրներ, ինչպես նաև ապահովելով տվյալների հանրամատչելիությունը ջրային ոլորտի վերաբերյալ հատուկ գիտելիքների չտիրապետող քաղաքացիների համար:

Երկրորդ ենթակետում սահմանված նպատակի իրականացումը սերտորեն կապված է ՏԻՄ-ի դերակատարության արժևորման հետ: Այստեղ խնդիրը հզորությունների զարգացման հարթությունում է, և օրենսդրական փոփոխություններ չեն ենթադրվում: Կարևոր է, որպեսզի համայնքի բնակիչների համար ջրային ոլորտի վերաբերյալ առավել պահանջված տեղեկատվությունը հասանելի լինի ՏԻՄ-ի միջոցով և ապահովվի դրա պարբերական թարմացումը:

Այս խնդրի կարգավորման համար ստեղծված են անհրաժեշտ իրավական նախադրյալներ, մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՏԻՄ-ը համարվում է տեղեկատվություն տնօրինող, և պարտավոր է իր տրամադրության տակ գտնվող



տեղեկատվությունը տրամադրել ըստ հարցման կամ տարածել սեփական նախաձեռնությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Կարևոր է, որ բնապահպանության և ջրային ոլորտի լիազորված պետական մարմինները և այլ պատկան կառույցները, օրենքով սահմանված կարգով, ՏԻՄ-երին տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն ունենան, իսկ համայնքի ղեկավարը ոչ միայն իրավունք ունենա պահանջելու էկոլոգիական տեղեկատվություն, այլ նաև ունենա պարտավորություն այն տարածելու և շրջանառելու համայնքի բնակիչների շրջանում:

**ՆՊՍՏԱԿ 3: Կատարելագործվել է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը և վերանայվել են ջրօգտագործման թույլտվության պայմանները:**

**3.1 Կատարելագործվել է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը:** Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը կարգավորվում է «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոտերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2003 թվականի 218-Ն որոշմամբ: Միաժամանակ, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգը սահմանված է «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2003 թվականի 217-Ն որոշմամբ: Թեև նշված որոշումներով սահմանված են ջրօգտագործման թույլտվության՝ որպես վարչական ակտի ընդունման գրեթե բոլոր հիմնական փուլերը և պայմանները, այդուհանդերձ, իրավիճակի վերլուծությունը փաստում է, որ համապատասխան ընթացակարգերն անհրաժեշտ է կատարելագործել՝ համապատասխան գործընթացներն իրապես մասնակցային, առավել թափանցիկ և հաշվետվողական դարձնելու նպատակով:

**3.2. Վերանայվել են ջրօգտագործման թույլտվության պայմանները:** «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոտերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2003 թվականի 218-Ն որոշմամբ սահմանված է ջրօգտագործման թույլտվության ձևաթուղթը և դրա բովանդակությունը կազմող պարտադիր պայմանները:

Այդ պայմանները կանխորոշում են իրականացվելիք ջրօգտագործման հիմնական պարամետրերը, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման ոլորտի իրականացվելիք միջոցառումները, թույլտվություն ստացած սուբյեկտի պատասխանատվությունը և պարտավորությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է ձևաթղթից դուրս բերել այլ իրավական ակտերի պայմանների վերարտադրությունները, հստակեցնել թույլտվություն ստացած անձի պարտավորությունները սահմանող դրույթները, ինչպես նաև նախատեսել լրացուցիչ պայմաններ, որոնք թույլ կտան ջրօգտագործողի կողմից ջրային ռեսուրսի պահպանության ուղղությամբ



ձեռնարկվելիք քայլերի կատարման նկատմամբ սահմանել պատշաճ պետական վերահսկողություն, ինքնամոնիթորինգ և հանրային հսկողություն:

**ՆՊՍՏԱԿ 4: Կատարելագործվել են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգերը**

**4.1. Կատարելագործվել են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգերը:** Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգը սահմանված է «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2003 թվականի 217-Ն որոշմամբ: Դրանով հանդերձ, հանրային մասնակցության առանձին բաղադրիչներ լուրջ վերանայման կարիք ունեն:

Մասնավորապես, անհրաժեշտ է հանրային մասնակցության առարկա դարձնել համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի վերաբերյալ գործարքները: Դրանից բացի, անհրաժեշտ է կատարելագործել ջրային ոլորտի կայացվելիք որոշումների վերաբերյալ հանրային ծանուցման եղանակները և կառուցակարգերը՝ որոշակի դերակատարում վերապահելով նաև ՏԻՄ-երին՝ ջրավազանային կառավարման տարածքային բաժինների հետ համատեղ կազմակերպելու հանրային քննարկումներ, արձանագրելու քննարկման արդյունքները և, սահմանված կարգով, ներկայացնելու պատկան մարմիններին: Այս նկատառումը հատկապես կարևոր է համայնքների խոշորացման գործընթացի համատեքստում:

Որպես մասնակցային գործընթացների արդյունավետության ապահովման նախապայման՝ անհրաժեշտ է հնարավոր ամենատարբեր եղանակներով քննարկման դրված փաստաթղթերը հասանելի դարձնել շահագրգիռ անձանց և հատկապես համայնքային բնակչությանը, ովքեր գործնականում չեն կարող մայրաքաղաքում ծանոթանալ համապատասխան փաստաթղթերին: Մեկ այլ առանցքային հարց է ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ հանրային մասնակցության/հանրային լուսմների գործընթացների կազմակերպումը համապատասխան համայնքներում, եթե դրա վերաբերյալ առկա է համայնքի բնակիչների կամ ՏԻՄ-ի նախաձեռնությունը:

Մասնակցային գործընթացների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարելագործել նաև հետադարձ կապի մեխանիզմը հանրության և ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի միջև: Եվ վերջապես, որոշում ընդունելու գործընթացի ավարտին պետք է ապահովվի ընդունված վարչական ակտի հրապարակայնությունը որոշում ընդունող մարմնի ինտերնետային կայքում:

**ՆՊՍՏԱԿ 5: Բարելավվել է ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը, կատարելագործվել են ՋՕԸ-երի մասնակցային կառավարման ոլորտի իրավական ակտերը**

**5.1. Կատարելագործվել են ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը:** «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՋՕԸ-երը ի սկզբանե ստեղծվել են որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, մասնակցային սկզբունքներով



ինքնակառավարվող կազմակերպություններ՝ նպատակ ունենալով ապահովել ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ և պաշտպանել իրենց անդամների շահերը: Այդուհանդերձ, հետագա փորձը ցույց է տվել, որ այդ կազմակերպությունները հեռացել են իրենց սկզբնական առաքելությունից՝ վերածվելով ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից լիովին կառավարվող օղակի:

Այս նպատակի իրագործումը իրավակարգավորման համատեքստում ուղղված է լինելու ՋՕԸ-երի մասնակցային կառավարման կառուցակարգի կատարելագործմանը՝ դիտարկելով դրանց հնարավոր վերակազմակերպման տարբերակը: Այս մտտեցման հիմքում դրված է ՋՕԸ-երի կողմից շահերի պաշտպանության գործառույթի իրականացումը, իսկ բուն ծառայությունների մատուցումը դիտարկվում է պետական կամ մասնավոր ընկերությունների կողմից:

ՋՕԸ-երի գործունեության անարդյունավետությունը պայմանավորող կարևոր գործոն է նաև պետական սուբսիդիաների տրամադրման ներկայիս սխեման, որը կրկին պետք է վերանայել՝ այն դարձնելով հասցեական, համապատասխան պետական աջակցությունն ուղղորդելով սոցիալապես խոցելի խմբերին: Անհրաժեշտ է սուբսիդիաները տրամադրել ոչ թե ուղղակիորեն ՋՕԸ-երին, այլ ջրօգտագործողներին վաուչերների տեսքով: Այս մտտեցման կենսագործման արդյունքում հնարավոր կլինի առավել թափանցիկ և հաշվետվողական դարձնել ՋՕԸ-երի գործունեությունը:

**5.2. Կատարելագործվել են ՋՕԸ-երի և ջրօգտագործողների միջև առկա պայմանագրային հարաբերությունները:** ՋՕԸ-երի և ջրօգտագործողների միջև առկա պայմանագրային հարաբերությունների կատարելագործումը դիտարկվում է երկու հարթություններում. 1) պայմանագրի պայմանների վերանայում և հստակեցում, և 2) ոռոգման ջուր օգտագործողների իրազեկվածության բարձրացում պայմանագրի պայմանների և դրանց իրականացման վերաբերյալ:

Ներկայում ՋՕԸ-երի և ջրօգտագործողների միջև կնքվող ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի պայմանները լրացուցիչ հստակեցման կարիք ունեն՝ կապված ոռոգման ջրի մատակարարման գրաֆիկի, մատակարարվող ոռոգման ջրի ծավալի չափման, ինչպես նաև վճարումների կատարման եղանակների և ժամկետների մասով: Բացի այդ, պայմանագրի տեքստում որոշ ՋՕԸ-եր վերարտադրում են «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում տեղ գտած ոչ իրավաչափ պայմանն առ այն, որ վեց ամիս ոռոգման ջրի համար չվճարելու դեպքում ՋՕԸ-ն իրավասու է վերցնելու հողամասի օգտագործման իրավունքը մինչև երեք տարի ժամկետով:

Ոռոգման ջուր օգտագործողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը հիմնականում պետք է ուղղված լինի պայմանագրի դրույթները հասկանալուն, ջրբաշխի հետ հարաբերությունների ճիշտ ընկալմանը, ոռոգման ջրի մատակարարման հայտ ներկայացնելու, վճարումների կատարելու եղանակների և ժամկետների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելուն, ինչպես նաև մատակարարված ոռոգման ջրի դիմաց կատարված վճարումների և պարտքերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հմտությունների ձևավորմանը: Կարևոր է նաև, որ վերջիններս հստակ պատկերացում ունենան այն մասին, թե ում և ինչպես դիմել ոռոգման ջրի մատակարարման կամ հարակից հարցերի վերաբերյալ վեճ ծագելու դեպքում:



**ՆՊԱՏԱԿ 6: Կատարելագործվել են ջրօգտագործողների, խմելու ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, ոռոգման ջրամատակարարման ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության կառուցակարգերը**

**6.1. Կատարելագործվել են իրավունքների պաշտպանության արտադատական կառուցակարգերը:** Հաշվի առնելով, որ իրավունքների պաշտպանության արտադատական ընթացակարգերը առավել դինամիկ են, քիչ ծախսատար, արագ, ու բացի այդ, նմանատիպ կառուցակարգերի կայացման դեպքում հնարավոր է ապահովել նեղ մասնագիտացված անձանց կողմից վեճերի ուսումնասիրությունը՝ այս ուղղությունը առանձնակի կարևորվում է արդյունավետության տեսանկյունից: Թեև ՀՀ գործող օրենսդրությունը ջրային բնագավառում սահմանել է վեճերի լուծման մի շարք արտադատական եղանակներ, սակայն պրակտիկայի վերլուծությունը խոսում է դրանց անարդյունավետության մասին: Ուստի, ոլորտի կատարելագործումը Ծրագիրը դիտարկում է հետևյալ խնդիրների լուծման համատեքստում.

1) Վեճեր կարգավորող առկա կառուցակարգերի կատարելագործում, մասնավորապես՝ ՀՀ Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովի գործունեության կատարելագործում,

2) Հաշտարարի, բնապահպանական օմբուդսմենի կամ միջնորդի ինստիտուտի ստեղծում, որը կուսումնասիրի ոչ միայն ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման ջրի մատակարարման, այլ նաև հանրային այլ ծառայությունների հետ կապված վեճերը:

3) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հզորացում (մասնագիտական հզորությունների զարգացում), որը թույլ կտա արդյունավետ կերպով ուսումնասիրել ջրային բնագավառի վեճերը և աջակցել դրանց կարգավորմանը:

**6.2. Կատարելագործվել է իրավունքների պաշտպանության դատական կառուցակարգը:** Այս կառուցակարգի կատարելագործումը առավելապես կապված է հզորությունների զարգացման և անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնման հետ: Կարևոր նշանակություն ունի նաև ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը:



1. **ՀՀ ջրային օրենսդրության ոլորտի մի շարք առանցքային իրավական ակտերի ընդունում և ՀՀ ջրային օրենսգրքում ու հարակից իրավական ակտերում հասկացությունների սահմանում և/կամ հստակեցում**
  - Ընդունել «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենք:
  - Մշակել «Խմելու ջրի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ, որը հիմք կհանդիսանա օրենքի մշակման և ընդունման համար:
  - Մշակել «Ռոռզման ջրի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ, որը հիմք կհանդիսանա օրենքի մշակման և ընդունման համար:
  - Ընդունել ռոռզման ջրի որակի ստանդարտները:
  - ՀՀ ջրային օրենսգրքի հասկացությունների համակարգում սահմանել «ջրօգտագործող», «ջուր սպառող», «ջրի հավասարաչափ մատչելիություն», «ազատ ջրօգտագործում» և մի շարք այլ եզրույթների բնորոշումները:
  
2. **Ջրային ռեսուրսների պետական մոնիթորինգի և ջրային ռեսուրսների պետական կադաստրի համակարգի բարելավում, տեղեկատվության մատչելիության կառուցակարգերի կատարելագործում**
  - Ամրագրել խմելու և ռոռզման ջրի մատակարարման հետ կապված ծառայությունների նկատմամբ հանրային հսկողության համակարգ՝ սահմանելով դրա մեթոդաբանությունը և չափորոշիչները:
  - Վերանայել «Ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը՝ հաշվի առնելով մոնիթորինգի էությունը՝ որպես պարբերական գործընթաց: Միաժամանակ, անհրաժեշտ է «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծում սահմանել մոնիթորինգի սկզբունքները և մեթոդաբանությունը, տարբեր ռեսուրսների մոնիթորինգի առանձնահատկությունները:
  - Ստեղծել բնապահպանական մոնիթորինգի տվյալներն արտացոլող միասնական առցանց հարթակ, որը հնարավորություն կտա հատուկ գիտելիքներ չունեցող անձանց ստանալ հասկանալի տեղեկատվություն ջրային ռեսուրսների քանակական և որակական հատկանիշների վերաբերյալ:
  - Ստեղծել անհրաժեշտ իրավական հիմքեր ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանության, ինչպես նաև տվյալ ոլորտի ծառայությունների նկատմամբ հանրային մոնիթորինգի ինստիտուտի կայացման համար:
  - [www.wrma.am](http://www.wrma.am) կայքում մատչելի դարձնել տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների բովանդակությունը՝ հաշվի առնելով առևտրային գաղտնիքի պաշտպանության կանոնները: Բացի այդ, առաջարկում ենք [www.wrma.am](http://www.wrma.am) կայքում, ինչպես նաև կայքում տեղադրված տարեկան հաշվետվություններում ավելացնել համապատասխան բացատրական գրառում/պարզաբանում, որը հնարավորություն կտա հանրությանը ճիշտ ընկալել հրապարակված տեղեկատվությունը:
  - Սահմանել էկոլոգիական (բնապահպանական) տեղեկատվության մատչելիության ռեժիմը, ներառյալ՝ անհրաժեշտ սահմանումները և առանձնահատկությունները:



- Մշակել ջրային ոլորտին առնչվող տեղեկատվության օրինակելի ցանկի ՏԻՄ-երի համար, որի հիման վրա ՏԻՄ-երը տարբեր տեղեկատվություն տնօրինողներից կկարողանան ստանալ ու դասակարգել տեղեկատվությունը համայնքի բնակիչներին տրամադրելու համար: Զուգահեռաբար անհրաժեշտ կլինի համայնքի բնակիչներին տեղեկացնել ՏԻՄ-ում մատչելի տեղեկատվության ցանկի մասին:

**3. Զրոգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացակարգի կատարելագործում և ջրոգտագործման թույլտվության պայմանների վերանայում**

- Ջրի ազգային խորհրդի կազմում ներգրավել Բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և ակադեմիական կառույցների ներկայացուցիչների:
- Հստակեցնել ջրոգտագործման սահմանային մեծությունները և այլ չափանիշներ, որոնք հաշվի առնելով ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը կկարողանա հստակ որոշում կայացնել ջրոգտագործման թույլտվության պահանջից ազատելու վերաբերյալ:
- ՀՀ ջրային օրենսգրքում սահմանել ջրոգտագործման թույլտվությունների սպառիչ ցանկ՝ ըստ նպատակների և առաջնահերթության: Առաջարկվող կարգավորումը հենք կստեղծի առանձին ջրոգտագործումների համար միասնական պայմաններ սահմանելու համար՝ թույլտվությունների մաս հանդիսացող պայմանները կանխատեսելի դարձնելով վերջիններիս համար:
- «Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ նախատեսելով ՋԹ տրամադրման էլեկտրոնային հայտերի ներկայացման գործիքի և համապատասխան կարգի մշակման գործողությունները:
- ՀՀ Կառավարության 2003 թվականի N218-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն՝ ջրոգտագործման թույլտվության ձևաթղթում «ջրոգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ» պայմանը վերաձևակերպելով հետևյալ կերպ՝ «ինքնահսկման գործողություններ/միջոցառումներ»:
- Զրոգտագործման թույլտվության ձևաթղթից հանել 11-րդ կետը՝ ջրերի ստանդարտները և (կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները:
- Զրոգտագործման թույլտվության 12-րդ կետի ձևակերպումը վերախմբագրել՝ ներառելով նաև սահմանված հատուկ միջոցառումների իրականացման ժամանակացույց կամ ըստ անհրաժեշտության այլ պայմաններ:
- Բարելավել ջրային ռեսուրսների պահպանության և կառավարման մարմնի պրակտիկան, որպեսզի ջրոգտագործման թույլտվության ձևաթղթի 14-րդ կետում հստակ նշվի տնտեսվարողի հանձնառությունը՝ հատուցելու իր գործունեությամբ պայմանավորված՝ ջրային ռեսուրսներին պատճառված վնասը, ինչպես նաև այդ նպատակի համար առկա ֆինանսական միջոցները:

**4. Զրային ռեսուրսների և ջրային համակարգերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցության կառուցակարգերի կատարելագործում**



- Ջրի ազգային խորհրդի կազմում ներգրավել բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և ակադեմիական կառույցների ներկայացուցիչների:
- Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերը հավատարմագրային կառավարման հանձնելու մրցութային հանձնաժողովի կազմը սահմանել իմպերատիվ ձևակերպմամբ՝ ապահովելով հնարավոր բոլոր շահագրգիռ պետական մարմինների ներգրավվածությունը և բացառելով մրցութի կազմակերպչի հայեցողությունը: Երկրորդ, մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև ոլորտի հասարակական կազմակերպության, որը կունենա համապատասխան թվով այլ հասարակական կազմակերպությունների աջակցությունը: Ըստ անհրաժեշտության հասարակական կազմակերպության ներգրավման համար կարող են մշակվել նաև այլ չափանիշներ: Սույն դիտարկումը արդիական է նաև կոնցեսիոն պայմանագրի դեպքում:
- Բարձրացնել համայնքների ղեկավարների և ՏԻՄ աշխատակազմի իրազեկվածության մակարդակը համայնքային սեփականության, և մասնավորապես՝ ջրային համակարգերի տնօրինման վերաբերյալ: Այս համատեքստում պետք է հաշվի առնել հոգուտ համայնքի ջրային համակարգերի տնօրինման հնարավորությունները, ինչպես նաև ջրային համակարգերն օգտագործման/կառավարման տրամադրելու պայմանագրեր կնքելիս արդյունավետ կառուցակարգ ընտրելու անհրաժեշտությունը:
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման 34-րդ կետը փոփոխել՝ ամփոփաթերթի կազմման (ներառյալ ստացված դիտողությունների ընդունման կամ չընդունման վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելը) պարտականությունը դնելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի վրա:
- «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ նախատեսելով իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին նախագիծը մշակող մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցության պահանջ:
- 1000 և ավելի օրինակ տպաքանակ ունեցող տպագիր միջոցները և ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում ծանուցում հրապարակելը նախատեսել որպես երկու պարտադիր եղանակներ:
- Քննարկվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մատչելի դարձնել ՋՌԿԳ ինտերնետային կայքում:
- Ծանուցման մեջ նշել էլեկտրոնային փոստի հասցե և հեռախոսահամար, որոնց միջոցով հնարավոր կլինի կապվել ՋՌԿԳ հետ:
- Փաստաթղթերին ծանոթանալու համար ծանուցման մեջ ներառել էլեկտրոնային հղում, իսկ ջրօգտագործման թույլտվությունների նախագծերի քննարկման դեպքում՝ համապատասխան փաստաթղթերը պետք է մատչելի լինեն նաև ազդակիր համայնք(ներ)ի ՏԻՄ նստավայրում, գրադարանում կամ համայնքային նշանակության այլ վայրում, ինչի մասին պետք է նշվի ծանուցման մեջ:
- «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ ծանուցման գործառույթ վերապահելով նաև ազդակիր համայնքի ղեկավարին:





- Շահագրգիռ հանրության կամ ՏԻՄ-ի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ հանրային քննարկումներ պետք է կազմակերպվեն ազդակիր համայնք(ներ)ում ջրավազանային կառավարման տարածքային բաժինների հետ համատեղ:

**5. Ջրօգտագործողների ընկերությունների գործունեության բարելավում և ՋՕԸ-երի մասնակցային կառավարման ոլորտի իրավական ակտերի կատարելագործում**

- Վերանայել ոռոգման ջուր մատակարարելու պայմանագրի տիպային ձևը և պայմանագրի առարկան (ինչպիսի որակի ոռոգման ջուր, ոռոգման համար մատակարարվող ջրի փաստացի ծավալ), կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ոռոգման ջրի մատակարարման գինն ու վճարման ժամկետները/տարածամկետ վճարման հնարավորություններն ու պայմանները, պատասխանատվության չափն ու ձևերը, պայմանագրի պարտադիր հավելվածները փոփոխելու միջոցով՝ առավել լիարժեք դարձնել այն:
- Սահմանել ոռոգման ջրի տարբերակված սակագներ, ներդնել տարածամկետ վճարման համակարգ:
- Վերանայել մեկ խորանարդ մետր ոռոգման ջրի համար սահմանված վճարն ու այն նվազեցնելու միջոցով հնարավորություն ստեղծել ջրօգտագործողների համար իրենց իրավունքներն ու պարտականությունները պատշաճ իրականացնելու համար:
- Սուբսիդավորումն իրականացնել ոչ թե որպես Ջրօգտագործողների ընկերությունների, այլ հասարակության անդամների գործունեության ֆինանսական աջակցություն՝ հիմք ընդունելով կոնկրետ խմբերի սոցիալական կարգավիճակը: Սուբսիդիաները տրամադրել ուղղակիորեն ոռոգման ջուր օգտագործողներին վաուչերների տեսքով:
- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածով և ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերում ամրագրված այն դրույթը, որի համաձայն Ընկերությունն իրավունք ունի պահանջել ջրօգտագործողից իրեն պատկանող հողամասի օգտագործման իրավունքը ոչ ավելի քան 3 տարի ժամկետով փոխանցել Ընկերությանը, եթե տվյալ տարվա ոռոգման սեզոնի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում ջրօգտագործողը չի վճարել ստացած ոռոգման ջրի համար:

**6. Ջրօգտագործողների, խմելու ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, ոռոգման ջրամատակարարման ծառայություններից օգտվողների շահերի պաշտպանության կառուցակարգերի կատարելագործում**

- Առավել արդյունավետ իրավական ու կազմակերպական պայմաններ ստեղծել Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովի, Կանոնակարգող խորհրդի և Ջրօգտագործողների ընկերություններում ձևավորվող Վեճեր լուծող հանձնաժողովների գործունեության համար, բարձրացնել այդ մարմինների գործունեության արդյունավետությունը՝ ներառելով հաշվետվողականության գործիքներ և խթանելով առավել թափանցիկ գործելաձևը:
- Հանրային ծառայությունների մատուցման, այդ թվում՝ ջրօգտագործման բնագավառի վեճերի լուծման համար ներմուծել հաշտարարի կամ միջնորդի ինստիտուտը, որը մասնագիտական բարձր գիտելիքների, աշխատանքային արդյունավետ հմտությունների



կիրառման միջոցով առավել կարճ ժամանակահատվածում լուծում կտա համապատասխան խնդրահարույց իրավիճակներին ու վեճերին:

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համալրել բնապահպանական ոլորտի համապատասխան մասնագետներով, որոնք իրենց մասնագիտական ոլորտի գիտելիքների ու կարողությունների միջոցով ավելի կարճ ժամանակահատվածում կկարողանան աջակցել համապատասխան խնդիրների լուծմանը:
- ՀՀ ՎԻՎՕ-ում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ ապահովելու համար իրավախախտումների և դրանց դիմաց պատժի համաչափությունը:
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխանաբար վարչական բողոք և վարչական դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ հոդվածները լրացնել նոր պայմանով, որը կսահմանի վարչական բողոք կամ հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկի պայման՝ սկսած իրավունքների խախտումն ի հայտ գալու կամ իրավունքը խախտած անձի՝ այդ մասին տեղեկանալու պահից:
- Անվճար իրավաբանական ծառայությունների հնարավորություն սահմանել սոցիալապես անապահով անձանց համար խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների ոլորտում վերջիններիս շահերի պաշտպանությունն ապահովելու համար:



Սույն փաստաթղթում ներառված ջրային ռեսուրսների արդյունավետ և մասնակցային կառավարման ոլորտի օրենսդրության և պրակտիկայի կատարելագործման 6 հիմնական ուղղություններ, որոնց շրջանակներում առաջարկվող լուծումների համար առկա ռիսկերն առավելապես ընդհանուր բնույթի են: Դրանք հիմնականում պայմանավորված են 2015 թվականի ՀՀ Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված պետաիրավական համակարգի լուրջ փոփոխություններով, այդ թվում՝ ՀՀ նոր կառավարության կազմավորմամբ ու հետևաբար նաև ՀՀ Կառավարության նոր ծրագրի հաստատմամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ փոփոխություններն իրենց հերթին մոտ ապագայում հանգեցնելու են էական փոփոխությունների նաև Հայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունը համարվող ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանության ու կառավարման բնագավառում: Նմանատիպ փոփոխությունները ենթադրում են նաև կառուցվածքային ու բովանդակային փոփոխություններ, որոնք անկանխատեսելի են այս պահին, սակայն խիստ ելակետային են ու լուրջ ազդեցություն են ունենալու սույն փաստաթղթի շրջանակներում առաջարկվող գործողությունների իրականացման վրա:

Սույն ռազմավարությամբ նախատեսվող գործողությունների կյանքի կոչման ռիսկերից է տարբեր գերատեսչությունների շահերի հնարավոր բախումը, որը կարելի է մեղմել համապատասխան պետական մարմինների հետ անհրաժեշտ աշխատանքներ տանելու միջոցով: Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում ՀՀ քաղաքականության և օրենսդրության զարգացման օրակարգի ձևավորման հարցում կարևոր նշանակություն ունի 2017 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ և ԵՄ միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որի «Ջրի որակը և պաշարների կառավարումը» բաժնում նախատեսված են հստակ պարտավորություններ: Սույն փաստաթղթի շրջանակներում ներկայացվող առաջարկներն իրենց տրամաբանությամբ համահունչ են այդ գործողություններին, ուստի այս առումով ռիսկերը նվազագույնին մոտ են:

Սույն ռազմավարական մոտեցումների իրագործման համար նախատեսված առանձին գործողությունների իրականացումը պահանջում է կարճ ժամկետներ, մինչդեռ կապված թե՛ այս ոլորտի կառուցվածքային, կազմակերպական ու իրավական փոփոխությունների հետ, թե՛ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի ժամկետների հետ, ռիսկային է համարվում իրավական ակտերում փոփոխություններ կատարելու գործընթացի ուշացումների հավանականությունը: Այն կարող է հանգեցնել ջրային ռեսուրսների օգտագործման ու կառավարման ոլորտի հետ կապված գործունեության արդյունքում շրջակա բնական միջավայրի աղտոտման, հետևաբար նաև բացասական ազդեցություն կունենա մարդու իրավունքների էկոլոգիական բաղադրիչի վրա:

Հզորությունների զարգացման հետ կապված մի շարք գործողությունների մասով բարձր ռիսկային է ֆինանսական միջոցների բացակայության կամ դրանց անբավարարության խնդիրը: Մինչդեռ ներկայացված ռազմավարական մոտեցումներում մեծապես կարևորվում է ջրային ռեսուրսների մասնակցային կառավարման գործընթացում ներգրավված տարբեր շահագրգիռ կողմերի հզորությունների զարգացումը:

Յուրաքանչյուր պետության ու հասարակության կյանքում ցանկացած քայլի իրագործման տեսանկյունից ելակետային գործոն է համարվում քաղաքական կամքը: Ներկայացված ռազմավարական մոտեցումների իրագործման համար ևս խիստ ռիսկային է համարվում



քաղաքական կամքի բացակայությունն ու համապատասխան մարմինների՝ ոչ նպատակամղված գործունեությունն այս ուղղությամբ:



Սույն ռազմավարության իրականացման մոնիթորինգն իրականացվելու է «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում ստեղծված Ջրային ոլորտի հանրային շահերի պաշտպանության ցանցի (ՋՀՇՊՑ) կողմից: ՋՀՇՊՑ-ն ջրային բնագավառում գործող գործընկեր կազմակերպությունների ցանց է, որն իր գործունեությունն իրականացնում է կամավոր անդամակցության, օրինականության, հրապարակայնության, թափանցիկության և ինքնակառավարման սկզբունքներով:

ՋՀՇՊՑ նպատակներից են.

1. ապահովել ջրային ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման/ բարելավման գործընթացում տարբեր տիպի ջրօգտագործողների մասնակցությունը կանխելով վերջիններիս շահերի բախումը իրավակիրառ գործընթացում,

2. ապահովել ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման գործընթացում հասարակության մասնակցությունը՝ հիմնելով/ստեղծելով հանրային մոնիթորինգի համակարգ:

ՋՀՇՊՑ-ն հանրության ներգրավման և առանցքային իրավական ակտերի վերաբերյալ որոշումների կայացման համատեքստում համակարգված աշխատանքներ է տանելու նաև համայնքների բնակչության հետ:

«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի իրականացման ընթացքում սույն ռազմավարության իրականացման նկատմամբ հետևողական աշխատանք կտանի նաև ծրագրի ղեկավարությունը: Բացի այդ, Ծրագրի ղեկավարությունը ջանքեր կգործադրի, որպեսզի սույն ռազմավարության շրջանակներում պլանավորվող գործողությունները ներառվեն ջրային ոլորտում այլ միջազգային ծրագրերի, օրինակ ԵՄ Կողմից ֆինանսավորվող «Ջրային նախաձեռնություն +» ծրագրի օրակարգում:

Ծրագիրը պլանավորում է սույն ռազմավարության մոնիթորինգի գործընթացին ներգրավվել նաև շահագրգիռ գերատեսչություններին՝ ի դեմս վերջիններիս համակարգում գործող ծրագրերի իրականացման ստորաբաժանումների:

Ռազմավարության իրականացման մոնիթորինգի նպատակն է ապահովել նախատեսված ժամկետներում պլանավորված գործողությունների արդյունավետ իրականացումը: Դա հնարավորություն կտա դասեր քաղել գործողությունների իրականացման արդյունքներից և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ ու ճշգրտումներ կատարել Ռազմավարությունում և համապատասխան գործողություններում:

Կիսամյակային կտրվածքով մոնիթորինգի ենթակա են Ռազմավարության շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները, որոնց մասով ՋՀՇՊՑ-ն տարեկան երկու անգամ կհրապարակի հաշվետվություններ: Այդ նպատակով որպես մոնիթորինգի չափանիշներ կընդունվեն հետևյալ դրույթները.

ա. յուրաքանչյուր գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը,

բ. իրականացված գործողության ավարտուն լինելը և համապատասխանությունը սահմանված նպատակին,

գ. յուրաքանչյուր գործողության իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների ծախսը,

դ. իրականացվող գործողություններում շահագրգիռ կողմերի ներգրավվածության մակարդակը և կատարված աշխատանքի մասնաբաժինը:

